

Նոյն գիւղացի Սատարինէ	25
Ստեփան Մովսիսեան	1
Նիկողայոս Երեմեանց	40
Մկրտչի կին Սօնայ	20
Բարսեղ Եովսէփեան	20
Պօղոս և Գէորգ Ղազարեանց	1
Եովհաննէս Տէր Նիկողայոսեան	50
Սահակ և Մարիամ Մկրտչեան	25
Մկրտիչ Փարմանեան	50
Բերոր Ղանդիկեան	20
Սարգիս քչեյ Եարութիւնեան	50
Ղահրամա մայր Ասի	20
Սահակ Մուրատեան	10

(Երբեք)

Պ. ԳԱԽԻԹ ԱՆԳԵԼԱՍԵԱՆ ԶԱՐԲԱՐԵԱՆՑ.

Ի Վիշնէէ մեր ստացած հաւատարիմ տեղեկութիւններէն ուրախութեամբ քարտի տեղեկացանք, զի տեղւոյն մերազնեայ բընակիչներէն Մեծ. Պ. Գաւիթ Ընդդէսեան Օւքարեանց ծերունազարդ պատուական անձն, որ ի նպաստ կարօտելոց բաշխելով առատ նուէրս՝ և այլ բարեգործութեամբք տեղւոյն ազգայնոց մէջ անուանի և նշանաւոր հանդիսացած է, սեպհական արդեամբք իւրովք և բարեպաշտ ամուսնոյն խիստ շքեղ նորոգել տուած է Վիշնէի Ս. Եստուածածին Եկեղեցւոյ Խաչկալը և Եռաջնորդական Եթոռը՝ մինչև 1700 ռուբլի ծախսելով:

Իսկ ի սոցանէ՝ ունի նաև մի այլ վսեմ և աստուածահաճոյ անձուկ և նպատակ, որ մի քանի տարիներէ հետէ զնոս՝ 20,000 ռուբլի արժողութիւն ունեցող 400 տեսակ թիւն վարկահոյն պիտի նուիրէ Վիշնէի Հայոց Հոգեւոր Գալոցին, որպէս զի յիշեալ դպրոց առաւել արդիւնաւոր դրից մէջ յարատեւ յօգուտ ի լուսաւո-

րութիւն և ի յառաջագիմութիւն երկսեռ Հայ մանկաւոյն:

Սոյն այս բարի դիտաւորութիւն Մեծ. Օւքարեանցի որքան օգտաւէտ և բազմաբաղձ է, քաջայայտ է մերազնեայց, որով նորա անուն և յիշատակ փառաւոր պէտք է մնայ Վիշնէի ներկայ և ապագայ Հայորեբոյն մէջ. ուստի նորա իղձը և նըպատակը մեծաւ հրճուանօք գովելով հանդերձ, որ շուտով կիրագործուի, կըփութամք Եմսագրոյս միջոցաւ մեր համակիր զգացմանց և ջերմ շնորհակալութեանց հաւատարմքը մատուցանել առ յիշեալ ծերունազարդ պատուական անձն և առ իւր բարեպաշտ ամուսինն, միանգամայն անշուշտ եմք՝ զի՝ ինչպէս ցարդ, նոյնպէս այսուհետեւ՝ Հայաստանի հարազատ որդւոց համար՝ բարերարներ ոչ պակսած են և ոչ պիտի պակասին, և հեղձհատէ կյաւելանան սոյնպիսի բարենախանձ Հայեր ի պայծառութիւն և ի պարծանս Եկեղեցւոյ Հայաստանեայց:

ԳԵՐ. ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի 14-ն ամսոյս Գ. Իր. Սարգիս Արքեպիսկոպոս Հասան Գալալեանց ի Շուշուոյ եկն ի Մայր Եթոռս, և մի քանի շաբաթէն պիտի վերադառնայ յիւր վիճակն:

Հետեւեալը հրատարակելով՝ կյաւելուեմք յայտնել, զի կարևոր ուշադրութիւն դարձուցուած է զարժանն հոգալոյ համար: